

## Անահիտ Ավդալյան

*Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ*

## ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ<sup>1</sup>

### Համառոտագիր

Հոդվածը նվիրված է «մեղադրանք» հասկացության քրեաիրավական էության ու նշանակության ուսումնասիրությանը և դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման արդի հիմնահարցերին:

Մեղադրանքը կանխորոշում է պետության և քաղաքացու օրինական շահերի պաշտպանության էությունը, որը համարվում է նաև քրեական դատավարության շարժիչ ուժը, այսինքն՝ մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը, հետևաբար քննարկելով մեղադրական գործունեության տեսական հիմքը՝ հնարավոր է ձեռնամուխ լինել դրա գործնական բաղադրիչը բացահայտելուն և վերջինի օրենսդրական կատարելագործմանն ուղղված հնարավոր տարբերակներ առաջադրելուն:

Ինչ վերաբերում է մեղադրանքի փոփոխման ինստիտուտին, ապա այն դատախազական գործառույթի բաղադրիչներից մեկն է: Ակնհայտ է, որ բոլոր մյուս քրեադատավարական գործառույթների առաջացման և զարգացման սկզբնական ազդակը մեղադրանքն է: Միաժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ քրեական դատավարության գործընթացը փոփոխական է և յուրաքանչյուր փուլում ձեռք են բերվում լրացուցիչ փաստական տվյալներ և այդ նոր փաստական տվյալներով պայմանավորված՝ կարող են փոփոխվել գործի փաստական հանգամանքները, այդ թվում՝ մեղադրյալին մեղսագրվող արարքի քրեաիրավական գնահատականը, այսինքն՝ բացառված չէ այնպիսի փաստական հանգամանքների ի հայտ գալը, որոնք հայտնի չեն եղել ու չէին կարող լինել և որոնք օբյեկտիվորեն պահանջում են մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փոփոխում:

**Հիմնաբառեր** - մեղադրանք, դատախազական գործառույթ, մեղադրանք ներկայացնել, մեղադրանքը փոփոխել, քրեաիրավական գնահատական:

### Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում շարունակական բնույթ են կրում իրավական համակարգի բարեփոխմանն ուղղված գործընթացները, որոնք ներառում են նաև քրեական արդարադատության ոլորտը: Այդ գործընթացում իր ուրույն տեղն է զբաղեցնում մեղադրանքի ինստիտուտը:

<sup>1</sup> Հոդվածը ներկայացվել է 08.05.2024թ., գրախոսվել է 14.05.2024 թ.:

Մեղադրանքը հանդիսանալով որպես քրեական դատավարության շարժիչ ուժ՝ իրականացնում է քրեական հետապնդման կարևոր խնդիրներից մեկը, այն է՝ մերկացնել անձին մեղսագրվող հանցագործության մեջ, հիմնավորել նրա քրեական պատասխանատվությունը:

Մեղադրանքի՝ որպես քրեական դատավարության հիմնական կատեգորիաներից մեկի էության ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել վերջինի իրականացման խնդիրները:

Քննարկելով մեղադրական գործունեության տեսական հիմքը՝ հնարավոր է ձեռնամուխ լինել դրա գործնական բաղադրիչը բացահայտելուն և վերջինի օրենսդրական կատարելագործմանն ուղղված հնարավոր տարբերակներ առաջադրելուն: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ բոլոր մյուս քրեադատավարական գործառնությունների առաջացման և զարգացման սկզբնական ազդակը մեղադրանքն է: Միաժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ քրեական դատավարության գործընթացը փոփոխական է և յուրաքանչյուր փուլում ձեռք են բերվում լրացուցիչ փաստական տվյալներ, և այդ նոր փաստական տվյալներով պայմանավորված՝ կարող են փոփոխվել գործի փաստական հանգամանքները, այդ թվում՝ մեղադրյալին մեղսագրվող արարքի քրեաիրավական գնահատականը, այսինքն՝ բացառված չէ այնպիսի փաստական հանգամանքների ի հայտ գալը, որոնք հայտնի չեն եղել ու չէին կարող լինել և որոնք օբյեկտիվորեն պահանջում են մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փոփոխում:

Ընտրված թեմայի արդիականությունն այն է, որ ի տարբերություն արտասահմանյան մասնագիտական գրականության՝ այն հայրենական մասնագիտական գրականության մեջ համեմատաբար քիչ է ուսումնասիրված, և դրա վերաբերյալ տեսակետները շարունակում են հակասական լինել: Ընդ որում, թեմայի ուսումնասիրությունը գիտական հրամայական ձեռք բերեց հատկապես քրեական դատավարության նորմերի ներպետական բարեփոխումների իրականացման ճանապարհին, երբ 2021 թվականին ընդունված քրեական դատավարության նոր օրենսգիրքն էական իրավական և հայեցակարգային փոփոխությունների ենթարկեց մեղադրանքի ինստիտուտը:

Հոդվածի նպատակը՝ ուսումնասիրել «մեղադրանք» հասկացության քրեաիրավական էությունը և նշանակությունը, դատասիսագի կողմից մեղադրանքի փոփոխման արդի հիմնախնդիրները:

Այդ նպատակը պայմանավորել է հետազոտության շրջանակներում հետևյալ խնդիրների առաջառնումը՝ բացահայտել «մեղադրանք» հասկացության էությունը, քննարկել մեղադրանքի բովանդակությունը, պարզաբանել մեղադրանքը փոխելու ինստիտուտի դերն ու նշանակությունը քրեական դատավարությունում՝ քրեական դատավարության նախկին և գործող օրենսգրքերի համեմատական վերլուծության միջոցով:

**§ 1. «Մեղադրանք» հասկացության քրեաիրավական էությունը և նշանակությունը**

Մեղադրանքը քրեական դատավարության շարժիչ ուժն է, որը մեծ նշանակություն ունի հանցավորության դեմ պայքարի գործընթացում: Մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Առանց մեղադրանքի՝ քրեական արդարադատությունը առարկայագուրկ է և անհնար: Մեղադրանքի գործառույթին ածանցյալ են ոչ միայն պաշտպանության գործառույթը, այլ նաև արդարադատության իրականացման գործառույթը:

Մեղադրանքի միջոցով իրականացվում է քրեական հետապնդման կարևոր խնդիրներից մեկը, այն է՝ մերկացնել անձին մեղսագրվող հանցագործության մեջ, հիմնավորել նրա քրեական պատասխանատվությունը: Քրեական պատասխանատվության ենթարկելու կարևոր նախապայմանը հանցագործության հանգամանքների և այն կատարող անձի պարզումն է: Միայն այս դեպքում է հնարավոր դառնում կոնկրետ հանցավոր արարքի հանգամանքները համադրել հանցակազմի հատկանիշների հետ: Այս առումով մեղադրանքը համարվում է հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարող անձի հետ կապող միակ հնարավոր դատավարական միջոցը և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն: Դրանով իսկ մեղադրանքը նպաստում է հանցավորության աճի զսպմանը, մեղավորների պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի իրականացմանը<sup>2</sup>:

«Մեղադրանք» հասկացությունը, անշուշտ, կարևոր նշանակություն ունի ցանկացած պետության քրեադատավարական գործընթացի համար: Որպես քրեական դատավարության հիմնական հասկացություն՝ մեղադրանքն անխզելիորեն կապված է քրեական դատավարության էության և բնույթի հետ: «Մեղադրանք» հասկացության օրենսդրական բովանդակության բացահայտումն ուղղակիորեն կապվում է մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի պատշաճ և արդյունավետ կիրառության հետ: Այն սերտորեն առնչվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով ամրագրված՝ անձի նվազագույն իրավունքի, այն է՝ իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին, ինչպես նաև Սահմանադրության 67-րդ հոդվածով և քրեական դատավարության գործող օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքը) 20-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության իրավունքի արդյունավետ ապահովման եղանակների հետ:

<sup>2</sup> Տե՛ս Գամբարյան Ա., Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը, Երևան, «Իրավունք» հրատ., 2009, էջ 8:

Քրեական դատավարության գիտության մեջ մեղադրանքի բնորոշման հետ կապված առկա են բազում տեսական բանավեճեր և դրա իմաստի ընկալման տարբեր մոտեցումներ:

«Մեղադրանքը» բնորոշվում է որպես՝

- քրեադատավարական գործառույթ և մեղադրողի գործունեության միջոց,
- անձին մեղսագրվող հակաիրավական և հանրության համար վտանգավոր գործողությունների կամ անգործությունների ամբողջություն,
- դատավարական հարաբերություն, որը ծագում է պետության և որպես մեղադրյալ ներգրավված անձի միջև,

դատարանին ուղղված պահանջ՝ մեղավոր ճանաչել մեղադրյալին<sup>3</sup>:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում «մեղադրանք» հասկացությունն ընկալվում էր նյութական և դատավարական իմաստով: Ֆ. Ֆատկուլինը դատավարական իմաստով մեղադրանք ասելով՝ հասկանում էր մեղադրյալին հանցագործություն կատարելու մեջ մերկացնելուն և քրեական պատասխանատվությունը հիմնավորելուն ուղղված դատավարական գործունեությունը, իսկ նյութաիրավական իմաստով՝ մեղադրանքը՝ կոնկրետ անձին մեղսագրվող հանրության համար վտանգավոր, հակաիրավական փաստերի ամբողջություն է, որը կազմում է կոնկրետ հանցակազմ<sup>4</sup>:

Դատավարական իմաստով՝ որոշ հեղինակներ դիտարկում են մեղադրանքը որպես դատավարական գործունեություն, օրինակ՝ Մ. Ստրոգովիչը մեղադրանքը մեկնաբանել է որպես «(...) դատավարական գործողությունների մի շարք, որոնք ուղղված են հանցագործության կատարման համար քրեական հետապնդման ենթարկված անձին դատապարտելուն և նրա նկատմամբ արժանի պատժի կիրառման ապահովմանը<sup>5</sup>»:

Վ. Սավիցկին և Է. Մելնիկովը մեղադրանքը սահմանել են որպես որոշակի անձի կողմից հանցագործություն կատարելու մասին եզրակացության ձևակերպում, հիմնավորում և հաստատում քննիչի ու դատախազի կողմից:

Մեղադրանքը նյութական իմաստով սահմանվում է որպես գործով հաստատված և մեղադրյալին վերագրված սոցիալապես վտանգավոր և անօրինական փաստերի մի շարք, որոնք կազմում են այդ հանցակազմի էությունը, որի համար տվյալ անձը քրեական պատասխանատվություն է կրում և պետք է դատապարտվի:

Մ. Ստրոգովիչը մեղադրանքի այս իմաստային ընկալումը դիտարկում է որ-

<sup>3</sup> Տե՛ս Մեդերյան Ռ., Մեղադրանքի հասկացությունը և գործառույթային բնութագիրը << քրեական դատավարությունում, «Արդարադատություն» գիտական հանդես, 2020, 2 (51), էջ 36:

<sup>4</sup> Տե՛ս Фаткуллин Ф. Н. Обвинение и судебный приговор, Казань, 1965, էջ 45:

<sup>5</sup> Տե՛ս Савицкого В. М., Уголовный процесс России. Лекции-очерки/ А. М. Ларин, Э. Б. Мельникова, В. М. Савицкий / Рос. акад. наук, Ин-т государства и права, Акад. правовой ун-т, Издательство: БЕК, Москва, 1997, էջ 14:

պես «(...) մեղադրանքի առարկա, մեղադրանքի բովանդակություն, այլ կերպ ասած՝ մեղադրական թեզ, պնդում, որ մեղադրյալը մեղավոր է<sup>6</sup>»:

Այսպիսով, դատաիրավական առումով մեղադրանքը «դատավարական գործողությունների ամբողջություն է, որոնք ուղղված են անձին հանցագործություն կատարելու մեջ բացահայտելուն և նրա նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված պատժի կիրառումն ապահովելուն»: Նյութական իմաստով մեղադրանքն իրենից ներկայացնում է «գործով հաստատված և անձին մեղսագրվող հանրորեն վտանգավոր արարքների ամբողջություն, որի համար անձը պետք է օրենքով սահմանված կարգով ենթարկվի պատասխանատվության»<sup>7</sup>:

«Մեղադրանքի» կառուցվածքային ընկալումը տեսության մեջ ևս միանշանակ չէ: Մի շարք հեղինակներ դիտարկում են մեղադրանքի երկտարր կառուցվածքը, որի համաձայն՝ մեղադրանքը գործով հաստատված, հանրության համար վտանգավոր ու հակաիրավական փաստերն են, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին, և մեղադրանքի իրավական որակումը՝ քրեական օրենքի այն կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Մյուս տեսակետի կողմնակիցները առանձնացնում են կատարված հանցագործության փաստական հանգամանքներն ու մեղադրանքի իրավական ձևակերպումը, որն իրենից ներկայացնում է կոնկրետ հանցագործության հատկանիշները և արարքի իրավական որակումը: Այլ կերպ ասած՝ ընդգծվում է մեղադրանքի եռատարր կառուցվածքը<sup>8</sup>:

«Մեղադրանք» հասկացության օրենսդրական բնորոշումները և դրա երկտարր կառուցվածքը ձևակերպված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում, Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում և Օրենսգրքում:

Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող քրեական մեղադրանք հասկացության կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ձևավորել է կայուն նախադեպային իրավունք, որի համաձայն՝ քրեական մեղադրանք եզրույթը պետք է հասկանալ ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային իմաստով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի գործով վճռում դիրքորոշում է արտահայտել առ այն, որ անձի նկատ-

<sup>6</sup> St'u Андреев В. А., “Обвинение в российском уголовном процессе: понятие, сущность, значение и теоретические проблемы реализации”, диссертация ... канд. юрид. наук., Екатеринбург, 2009, էջ 26:

<sup>7</sup> St'u Фаткуллин Ф. Н., Проблемы теории государства и права/ Учебное пособие – Казань, КЮИ МВД России, 2003., էջ 276:

<sup>8</sup> St'u Ермолаев Д. О., Ермолаева Ю. Н., Мулаева Х. М., “Некоторые проблемы института изменения обвинения и отказа от него в уголовном процессе России”, Журнал Вестник алтайской академии экономики и права, 2018, № 7, էջ 178:

մամբ «մեղադրանք»-ի առկայության մասին կարող են վկայել նաև այնպիսի միջոցների ձեռնարկումը, ինչպիսիք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև այնպիսի հանգամանքներ, որոնք էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա<sup>9</sup>:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ «Զրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն հասկանալի լեզվով, անհապաղ ու հանգամանալից տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին»:

Մեղադրական եզրակացությունը վճռորոշ դեր է խաղում քրեական հետապնդման մեջ, դրա հանձնման պահից մեղադրվող անձը համարվում է իրեն ներկայացված մեղադրանքի փաստական և իրավական հիմքերի մասին պաշտոնապես և գրավոր ձևով տեղեկացված<sup>10</sup>:

«Մեղադրանք» հասկացության քրեաիրավական էությանը և նշանակությանը անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը մի շարք նախատեսային որոշումներում՝ ձևավորելով կայուն իրավական դիրքորոշում: Մասնավորապես, Արևադի Պապյանի վերաբերյալ թիվ ՏԳ/0115/01/09 գործով 2010 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է ձևավորել, ըստ որի՝ «մեղադրանք» եզրույթն իրենից ներկայացնում է.

1. գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակաիրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,
2. քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Մեղադրանքը պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Վերջինների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական իրավանորմը, որով նախատեսված են հանրության համար վտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավական գնահատական տալուն<sup>11</sup>:

Լևիկ Պողոսյանի վերաբերյալ թիվ ԵԿԳ/0136/11/11 գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է

<sup>9</sup> Տե՛ս European Court of Human Rights, Case of Subinski v. Slovenia, <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-79156>

<sup>10</sup> Տե՛ս European Court of Human Rights, Case of Pelissier and Sassi v. France, <https://hudoc.echr.coe.int/fre?i=002-9400>

<sup>11</sup> Տե՛ս Արևադի Պապյանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=66382>

ձևավորել առ այն, որ մեղադրանքը օրենսդրական կարգով նախատեսված ներկայացված հիմնավորումն է որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ երբ քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ տրվում են այնպիսի ձևակերպումներ, որոնցից հետևում է, որ կոնկրետ անձը կատարել է քրեորեն պատժելի արարք, քննարկվող որոշումն իրավական հետևանքների առումով հավասարվում է անձին մեղադրանք առաջադրելու մասին որոշմանը:

Բացի այդ, քրեական գործ հարուցելու մասին որոշման մեջ անձին որպես հանցանք կատարողի մատնանշելու պարագայում, վերջինն իրավունք է ձեռք բերում օգտվելու որոշակի դատավարական երաշխիքներից, այդ թվում՝ պաշտպանության իրավունքից, այսինքն՝ եթե քրեական գործ հարուցելու մասին որոշման նկարագրական-պատճառաբանական կամ եզրափակիչ մասերում առկա ձևակերպումներից ուղղակիորեն հետևում է, որ դատավորը կատարել է քրեորեն պատժելի արարք, ապա քրեական գործ հարուցելու մասին որոշումը ենթակա է դատական կարգով բողոքարկման<sup>12</sup>:

Անդրադառնալով ներպետական օրենսդրության կարգավորումներին՝ հարկ է արձանագրել հետևյալը.

Քրեական դատավարության նախկին օրենսգրքի 6-րդ հոդվածի 20-րդ կետի համաձայն՝ «մեղադրանքը քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորում է որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին»:

Օրենսգրքի 6-րդ հոդվածի 42-րդ կետի համաձայն՝ «Մեղադրանքը որոշակի անձի կողմից ենթադրյալ հանցանք կատարելու մասին վարկած է, որն ունի փաստական և իրավական հիմնավորում»:

Ակներև է, որ «մեղադրանք» հասկացության ներպետական նոր օրենսդրական կարգավորումը, ի տարբերություն նախկին օրենսդրական կարգավորման, որը մեղադրանքը դիտարկում էր միայն քրեաիրավական որակման իմաստով, արտահայտում է մեղադրանքի փաստական և իրավական նորմերը, որոնք որպես անբաժանելի տարրեր պետք է փոխհամաձայնեցված լինեն և չհակասեն միմյանց:

Վերոգրյալի համատեքստում ավելորդ չէ նշել նաև, որ Վճռաբեկ դատարանն Արսեն Մերոբյանի վերաբերյալ թիվ ՎԲ-46/07 գործով 2007 թվականի մարտի 30-ի որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել «մեղադրանք» հասկացության վերաբերյալ և նշել, որ այն ներառում է նաև արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը, ինչը նշանակում է, որ եթե «մեղադրանք» եզրույթը հասկանանք միայն «քրեաիրավական որակում» իմաստով, և այն չներառի իր մեջ արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստական հանգամանքները, ապա մեղադրյալի պաշտպանության իրավունքը չի լինի կոնկ-

<sup>12</sup> Տե՛ս Լևիկ Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0136/11/11 որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77189>

րետ և իրական, այլ կլինի վերացական և պատրանքային, քանի որ առանց փաստական հիմքի՝ քրեաիրավական որակումից պաշտպանվելու իրավունքն առարկայագուրկ է<sup>13</sup>: Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս «մեղադրանք» հասկացության ներքո դիտում է ինչպես արարքի իրավական, այնպես էլ փաստական բնութագրերը: Այսպես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում օգտագործվում է «մեղադրանքի բնույթ և հիմք» հասկացությունը, որի բովանդակությունը բացահայտվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում: «Բնույթ»-ը նշանակում է այն հանցանքը, որի համար անձը մեղադրվում է (այն է՝ իրավական բնութագիր), իսկ «հիմք» բառը ցույց է տալիս այն գործողությունը կամ գործողությունները, որոնք ենթադրաբար կատարվել են<sup>14</sup>:

## **§ 2. Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման արդի հիմնահարցերը**

Քրեական դատավարությունը ճանաչողական գործունեություն է, որն ուղղված է նախկինում տեղի ունեցած դեպքի հետազոտմանը և վերականգնմանը: Քրեական դատավարության իրար հաջորդող յուրաքանչյուր փուլում ձեռք են բերվում լրացուցիչ տվյալներ, ինչը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել դեպքի վերաբերյալ: Այլ կերպ ասած՝ քրեական վարույթի նախաձեռնումից մինչև քրեական գործի լուծումը քրեական գործի քննությունը գտնվում է զարգացման փուլում, իսկ դատավարական ճանապարհով ձեռք բերված նոր տվյալներով պայմանավորված՝ կարող են փոփոխվել գործի փաստական հանգամանքները և մեղադրյալին մեղսագրվող արարքի իրավական որակումը:

Միևնույն ժամանակ, քրեական գործի դատաքննության փուլում բացառված չեն այն իրավիճակները, երբ ապացույցների հետազոտման արդյունքում ի հայտ գան այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք մինչդատական վարույթում հայտնի չեն եղել և չէին էլ կարող հայտնի լինել և որոնք գործում առկա այլ փաստական հանգամանքների հետ օբյեկտիվորեն պահանջում են մեղադրյալին մինչդատական վարույթի ընթացքում ներկայացված մեղադրանքի փոփոխում կամ լրացում: Այդ փաստական հանգամանքների հիման վրա դատախազը պարտավոր է քրեադատավարական օրենքով սահմանված ընթացակարգով փոխել մինչդատական վարույթի ընթացքում ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը՝ նրան առաջադրելով նոր մեղադրանք: Բացի դրանից, իրավակիրառ պրակտիկայում առաջանում են իրավիճակներ, երբ առանց փաստական հանգամանքնե-

<sup>13</sup> Տե՛ս Մկրտումյան Ա., Ավետիսյան Դ., Ենգիբարյան Վ., Մելիքյան Ռ., Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2011, էջ 291:

<sup>14</sup> Տե՛ս European Court of Human Rights, Case of Pellisier and Sassi v. France, <https://hudoc.echr.coe.int/fre?i=002-9400>



րի փոփոխության դատաքննության ընթացքում առաջանում է դատախազի կողմից մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբանական որակումը փոխելու անհրաժեշտություն, ինչը նույնպես հանգեցնում է նոր մեղադրանքի առաջադրման<sup>15</sup>:

Մեղադրանքի փոփոխման ինստիտուտը դատաքննության ընթացքում քրեական դատավարության իրավունքի իրարամերժ հիմնախնդիրներից է:

Տեսության մեջ նշվում է, որ մեղադրանքը փոփոխելը, որպես սեռային հասկացություն, ընդգրկում է մեղադրանքը շտկելու՝ օրենքով նախատեսված հետևյալ ձևերը՝ մեղադրանքը լրացնելը, որակման փոփոխությունը, քրեական հետապնդման մասնակի դադարեցումը: Այսպիսով, մեղադրանքը լրացնելը մեղադրանքի փոփոխման ձև է, ուստի կարիք չկա օրենսդրությամբ այն առանձնացնել:

Առանձին դատավարազետներ մատնանշում են մեղադրանքը փոփոխելու հետևյալ հիմքերը՝

1. մեղադրանքի բովանդակության այնպիսի փոփոխություն, որի դեպքում հանցագործության ծանրությունը մնում է նույնը,

- մեղադրանքի փաստական հանգամանքների փոփոխություն, որի դեպքում արարքի որակման իրավաբանական ձևակերպումը մնում է անփոփոխ,
- որպես մեղադրյալ ներգրավված անձի փոփոխություն (մեղադրյալի անձի մասին տվյալների ուղղում՝ անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան տարին և օրը),

2. խստացման առումով մեղադրանքը փոփոխելը՝ մեղադրանքի ծավալը լրացնելու, այսինքն՝ լրացուցիչ դրվագներ, հանցակազմեր ավելացնելու, արարքն առավել խստիվ վերատրակելու, հանցակազմի որակյալ հատկանիշներ ավելացնելու եղանակով,

3. մեղմացման առումով մեղադրանքը փոփոխելը՝ մեղադրանքի ծավալի առանձին դրվագներ, հանցակազմեր հանելու, արարքը մեղմացման առումով վերատրակելու, որակյալ հատկանիշներ հանելու եղանակով<sup>16</sup>:

Վերջին տարիներին ինչպես նախկին քրեական դատավարության, այնպես էլ գործող օրենսգրքերով սահմանված են եղել կամ սահմանվելու նպատակով քննարկվել են դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման վերաբերյալ քրեական դատավարության իրավունքի տեսությանը հայտնի բոլոր հնարավոր ռեժիմները՝ քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու ինստիտուտը, դատախազի կողմից մեղադրանքի փոփոխումը քննչական գործողությունների կատարմամբ, դատախազի կողմից սեփական հայեցողությամբ մեղադրանքի փոփոխումն առանց քննչական գործողությունների կատարման, դատարանի

<sup>15</sup> Տե՛ս Սարգսյան Հ., Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերը ըստ ՀՀ դատավարության նոր օրենսգրքի նախագծի, Պետություն և իրավունք N2 (64), 2014, ԵՊՀ, էջ 130:

<sup>16</sup> Տե՛ս Федотченко А.В., “Привлечение лица в качестве обвиняемого”, Автореф., дисс. ... канд. юрид. наук, 2006, էջ 13:

միջնորդության հիման վրա գլխավոր դատախազի կողմից մեղադրանքի, դատախազի կողմից փաստական հանգամանքներով մեղադրանքի փոփոխումը միայն օրենքով նշված հստակ պայմանների առկայության դեպքում:

2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում իրականացված դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլում խնդիր դրվեց մշակել և ընդունել դատաիրավական համակարգի նոր օրենսդրական նորմեր: Զննարկումների ժամանակ դատաիրավական բարեփոխումների հանձնաժողովն անդրադարձավ նաև դատարանում մեղադրանքի փոփոխման հիմնահարցին և 2006 թվականի հունիսի 9-ին կայացած նիստում ընդունվեց հետևյալ մոտեցումը, որ եթե առաջին ատյանի դատարանում մեղադրողը գտնում է, որ մեղադրանքը ենթակա է խստացման, քանի որ դատական քննության ժամանակ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, դատախազը պարտավոր էր միջնորդություն ներկայացնել դատարանին՝ արարքը վերաորակելու նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում էր նիստն անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար:

Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-710 նախադեպային որոշմամբ գործը դատարանից լրացուցիչ նախաքննության վերադարձնելու՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված կարգն անհամատեղելի համարեց մեր երկրում սահմանադրական փոփոխությունների արդյունքում կատարվող դատաիրավական բարեփոխումների տրամաբանության հետ. բարեփոխումներ, որոնք ուղղված են դատարանի անկախության և անկողմնակալության ապահովմանը, մեղադրական թեքումից նրա վերջնական ձերբազատմանը<sup>17</sup>:

Մասնավորապես, դատարանը նշեց, որ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը քննության առարկա խնդրի առնչությամբ հայեցակարգային նոր մոտեցում է որդեգրել: Նույն օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է՝ «Եթե առաջին ատյանի դատարանում մեղադրողը գտնում է, որ մեղադրանքը ենթակա է մեղմացման կամ խստացման, քանի որ դատական քննության ժամանակ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չէին մինչդատական վարույթում, դատախազն իրավունք ունի միջնորդություն ներկայացնելու դատարան՝ արարքը վերաորակելու նպատակով դատական նիստը հետաձգելու վերաբերյալ: Դատարանը դատախազի միջնորդությամբ հետաձգում է նիստը՝ անհրաժեշտ քննչական գործողություններ կատարելու և նոր մեղադրանք առաջադրելու համար (...)»: Փաստորեն, օրենքի այս դրույթը բացառեց դատարանի կողմից գործը լրացուցիչ քննության ուղարկելու կարգը, և բոլոր դեպքերում, եթե գործն ընդունվել է դատարանի վարույթ, սպա այն պետք է հանգուցալուծվի դատական վարույթում:

<sup>17</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի թիվ ՄԴՈ-710 որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/633c18d94f1f2\\_sdv-710.pdf](https://www.concourt.am/decision/decisions/633c18d94f1f2_sdv-710.pdf)

Դատաիրավական բարեփոխումների հաջորդ փուլում մեղադրանքի խստացման և մեղմացման առումով մեղադրողի կողմից մեղադրանքի փոփոխմանը տրվեց տարբերվող մոտեցում: Բանն այն է, որ մինչև երկրորդ փուլը դատարանում մեղադրանքի փոփոխությունը թույլատրվում էր, եթե փոփոխվող մեղադրանքը չէր վատթարացնում ամբաստանյալի վիճակը: Եթե դատաքննության ընթացքում դատարանը եզրակացնում էր, որ ամբաստանյալը կատարել է ավելի ծանր հանցանք, քան մինչդատական վարույթում առաջադրված մեղադրանքը, ապա նման դեպքերում դատարանը ոչ թե փոխում էր մեղադրանքը, այլ գործն ուղարկում էր լրացուցիչ նախաքննության: Այս դեպքում դատարանն իրավունք չունեի դուրս գալու մեղադրանքի շրջանակներից և ամբաստանյալին դատապարտեր ավելի խիստ մեղադրանքով: Այս մոտեցումը պայմանավորված էր և՛ մրցակցության սկզբունքի պահանջով, և՛ ամբաստանյալի իրավունքների պաշտպանությամբ<sup>18</sup>: Մյուս կողմից, եթե դատաքննության ընթացքում պարզվում էր, որ արարքը ճիշտ որակված չէ և ամբաստանյալին առաջադրվել էր առավել խիստ մեղադրանք, ապա դատարանն իրավունք ուներ դատավճիռ կայացնելիս արարքը վերաորակել առավել մեղմ հանցակազմով: Այստեղից պարզ է դառնում, որ մինչև դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը դատաքննության ընթացքում մեղադրանքի փոփոխումը թույլատրվում էր միայն մեղմացման առումով, և դատարանը կարող էր դատավճիռ կայացնել ավելի մեղմ մեղադրանքով, քան ամբաստանյալին նախաքննության ընթացքում առաջադրվածն էր:

Մինչդեռ, քրեական դատավարության նախկին օրենսգիրքը որդեգրել էր այլ մոտեցում, մասնավորապես՝ 309.1-րդ հոդվածը վերտառված էր «Առաջադրված մեղադրանքը լրացնելու կամ փոփոխելու սահմանները»: Նշված հոդվածով կարգավորվում էր մեղադրանքի փոփոխման և լրացման կարգը, ինչպես մեղմացման, այնպես էլ խստացման առումով:

Վերոնշյալ հոդվածը նախատեսում էր մեղադրողի կողմից դատարանում մեղադրանքը փոփոխելու երկու ռեժիմ:

Առաջին ռեժիմի գործադրման հիմքն այնպիսի հանգամանքների ի հայտ գալն էր, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում: Մեղադրանքի փոփոխման այս ռեժիմը գործադրվում էր, եթե նոր հանգամանքն ի հայտ գալուց հետո գործի փաստական հանգամանքները հնարավորություն չէին տալիս մեղադրանքը փոփոխել առանց դատական քննությունը հետաձգելու, այսինքն՝ եթե ի հայտ եկած հանգամանքը կամ դրվագը դատական քննության սահմաններում կատարված քննությամբ դեռևս չէր հասատվել, և դրա ուղղությամբ անհրաժեշտ էր կատարել քննչական գործողություններ:

Մեղադրանքի փոփոխման երկրորդ ռեժիմը գործադրվում, և մեղադրանքը

<sup>18</sup> Տե՛ս Ղամբարյան Ա., Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը, Երևան, «Իրավունք» հրատ., 2009, էջ 33:

փոփոխվում էր առանց դատական քննությունը հետաձգելու, եթե մինչդատական վարույթում անհայտ կամ հայտնի, բայց չհաստատված հանգամանքը հաստատվում էր դատարանում՝ այդպիսով վկայելով մեղադրանքը փոփոխելու անհերքելի անհրաժեշտության մասին:

Հարկ է նշել, որ նոր Օրենսգիրքը մանրամասն կարգավորել է հանրային մեղադրողի կողմից ներկայացված մեղադրանքը փոփոխելու կամ լրացնելու կարգը՝ սահմանելով ինչպես դրա հիմքը, այնպես էլ պայմանները: Դրանք սահմանված են Օրենսգրքի 276-277-րդ հոդվածներում: Այսպես՝ մեղադրանքի փաստական հիմքը կարող է փոփոխվել կամ լրացվել միայն այն դեպքում, երբ դատարանում հետազոտված ապացույցներով հաստատվել են այնպիսի հանգամանքներ, որոնք վկայում են մեղադրյալին նոր մեղադրանք ներկայացնելու կամ ներկայացված մեղադրանքը փոփոխելու անխուսափելիության մասին:

Ինչպես նկատելի է, ներկա օրենսդրությունն ամրագրել է մեղադրանքի փոփոխման մեկ ռեժիմ, որը նախկին օրենսդրությամբ նախատեսված երկու ռեժիմների հիբրիդն է: Այն թույլ է տալիս մեղադրանքը փոփոխել միայն առանց նոր քննչական գործողություններ կատարելու համար դատական քննությունը հետաձգելու հնարավորության, և այն դեպքում, երբ ի հայտ են եկել նախկինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքներ: Այդպիսով, նման իրավական կարգավորումը բացառում է մեղադրանքի փոփոխման առաջին ռեժիմը՝ չեզոքացնելով լրացուցիչ նախաքննության և մեղադրանքի փոփոխման դատավարական ինստիտուտների վերջին նմանությունները և վերացնում վերջինի կիրառության ժամանակ գործնականում առաջացող և միգուցե այդ նմանությունների չեզոքացման, վերջինի քողարկված կիրառության բացառման նպատակով այդ ինստիտուտի առանձին մեկնաբանություններով խորացված հիմնախնդիրները<sup>19</sup>: Օրենսգիրքը դատարանում փոփոխվող մեղադրանքին՝ որպես բացառիկ երևույթի, ներկայացնում է որոշակի ձևական պահանջներ, որոնց համաձայն՝ Օրենսգրքի 277-րդ հոդվածի 5-րդ կետի կրկնակի անտեսումը հանգեցնելու է դատական վարույթը սկզբնական մեղադրանքով շարունակելուն՝ մեղադրանքի կողմի համար դրանից բխող բոլոր հետևանքներով:

Մեղադրանքի փոփոխման հիմքերի և պայմանների առկայության դեպքում մեղադրողի միջնորդությամբ դատարանը հետաձգում է դատական նիստը՝ վերջինիս տալով մեղադրանքը փոփոխելու մասին որոշում կայացնելու հնարավորություն: Հարկ է փաստել, որ այս իրավակարգավորմամբ վերաիմաստավորվել է մեղադրանքի փոփոխման ռեժիմը որոշող և դրա դատավարական կարգի բաղադրիչ համարվող դատական քննությունը հետաձգելու հնարավորությունը՝ այն դիտելով որպես մեղադրանքը փոփոխելու մասին որոշում կայացնելու ապահովման տեխ-

<sup>19</sup> Տե՛ս Բաղդասարյան Գ., Դատարանում մեղադրանքի փոփոխման սահմաններն ու դրա նկատմամբ դատական վերահսկողությունը, Պետությունը և իրավունք, N 1 (67), Երևան, 2015, էջ 21:

նիկական միջոց: Այսպիսով, Օրենսդիրն ապահովել է դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման նկատմամբ նախնական վերահսկողությունը՝ դրա իրավաչափության գնահատման դատավարության մասնակիցների համար որոշակի արդյունքով՝ այդ կերպ բացառելով մեղադրանքի և դրա ուժով՝ դատական քննության սահմանների ոչ իրավաչափ փոփոխությունը<sup>20</sup>:

Վերոգրյալից հետևում է, որ մեղադրանքը փոփոխելու նոր իրավակարգավորմամբ մեղադրանքի կողմն այլևս չունի որևէ օրենսդրական հնարավորություն՝ դատական վարույթում քննվող քրեական գործով նոր քննչական գործողություններ կատարելու: Բացառություն է նախատեսվել նաև նոր հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դատարանի վարույթում քննվող քրեական գործը քննիչին վերադարձնելու մասով: Այսպիսով, մեղադրանքի փոփոխությանը նախորդող գործընթացը պետք է լինի հրապարակային դատաքննության շրջանակներում և դուրս չգա դատական վերահսկողությունից: Հակառակ դեպքում կարժեզրկվի անկախ, անկողմնակալ և մրցակցային դատարանի սահմանադրաիրավական դերը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներով նույնպես անդրադարձել է քննարկվող հարցին:

Մասնավորապես, Սադակը և այլք ընդդեմ Թուրքիայի որոշմամբ դիմողների կարծիքով՝ փաստերի որակման փոփոխումը դատավճռի հրապարակումից անմիջապես առաջ հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Դիմողները պնդում էին, որ նրանց ներկայացված մեղադրանքը փոփոխվել էր վերջին լսման ընթացքում: Ի սկզբանե դիմումատուները մեղադրվում էին անջատողական քարոզչության ու պետության ամբողջականությանը վնաս պատճառելու մեջ, սակայն դատավճռի հրապարակման օրը պետական անվտանգության դատարանն առաջարկեց նրանց անմիջապես պատրաստվելու պաշտպանվել մի նոր մեղադրանքից, այն է՝ անօրինական զինված խմբակցության մեջ ներգրավված լինելը: Այնուհետև, դատարանը մերժել է նոր մեղադրանքի դեմ պաշտպանությանը նախապատրաստելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու մասին դիմողների միջնորդությունը: Դիմողների կարծիքով՝ իրենք չունեին համարժեքորեն պաշտպանվելու և նոր մեղադրանքի դեմ ապացույցներ ներկայացնելու հնարավորություն:

Մյուս կողմից, Թուրքիայի իշխանությունները պնդում էին, որ պետական անվտանգության դատարանին չի կարելի քննադատել քրեական հետապնդման առարկայի որակումը փոփոխելու իր իրավունքն օգտագործելու համար այն պարագայում, երբ վերջինն ընտրում է փաստերի որակման նվազ խիստ տարբերակը, քան այն, որը սկզբնապես ներկայացված էր մեղադրանքի մեջ: Եվրոպական

<sup>20</sup> Տե՛ս Դուկասյան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա., ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 409:

դատարանի կարծիքով՝ Անկարայի պետական անվտանգության դատարանը փաստերի որակման անքակտելի իր իրավունքն օգտագործելիս պարտավոր էր պաշտպանության կողմին տրամադրել անհրաժեշտ ժամանակ՝ նոր մեղադրանքի դեմ արդյունավետ պաշտպանությանը նախապատրաստվելու համար: Գործի նյութերից բխում է, որ պետական անվտանգության դատարանը թեև կարող էր հետաձգել գործի քննությունը, սակայն հնարավորություն չի տվել դիմումատուներին նոր մեղադրանքով նախապատրաստվել պաշտպանությանը: Վերջինները փաստերի որակման մասին տեղեկացվել էին միայն դատավարության վերջին օրը, բացի այդ դատական նիստի անցկացման օրը բացակայում էին դիմողների փաստաբանները:

Հաշվի առնելով այս հանգամանքները՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ տեղի է ունեցել դիմումատուների՝ իրենց ներկայացված մեղադրանքի բնույթի մասին մանրամասն տեղեկացված լինելու և պաշտպանությունը նախապատրաստելու համար անհրաժեշտ ժամանակ և պայմաններ ունենալու իրավունքի խախտում<sup>21</sup>:

Վերգորյալից գատ՝ հարկ է նշել, որ մեղադրանքի փոփոխման հնարավորությունը նախատեսված է միայն առաջին ատյանի դատարանում: Մեղադրանքը փոփոխելու հնարավորությունը հանդիսանում է մեղադրանքի պաշտպանության գործառնության բաղադրիչ և, ըստ էության, չի կարող իրացվել Վերաքննիչ դատարանի վարույթում: Այս պակացությամբ Վճռաբեկ դատարանը Գեղամ Ղազարյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0136/11/11 գործով 2012 թվականի մարտի 30-ի որոշմամբ իրավական դիրքորոշում է ձևավորել առ այն, որ արգելվում է մեղադրանքի փոփոխումը վերաքննիչ վարույթում: Սա նաև բացառում է առաջին ատյանի դատարանում անցանկալի դատական գնահատականի արժանացած մեղադրանքի ճշգրտման, լրացման կամ այլ փոփոխության շնորհիվ այն նոր դատական գնահատման արժանացնելու մեղադրողի հնարավորությունը: Ավելին՝ Վճռաբեկ դատարանն այդ հնարավորությունը բացառում է ոչ միայն հենց վերաքննիչ վարույթում, այլև թույլ չի տալիս դատական ակտի՝ այդ նպատակով բեկանման միջոցով շրջանցել փուլային արգելքն ու փոփոխել մեղադրանքն առաջին ատյանի դատարանում՝ գործի նոր քննության շրջանակներում: Վճռաբեկ դատարանն ուղղակիորեն արգելում է մեղադրանքի փոփոխման ենթակա լինելու պատճառով և մեղադրողին այն փոփոխելու հնարավորություն տալու համար դատական ակտը բեկանելն ու գործը նոր քննության ուղարկելը և նոր քննության շրջանակներում մեղադրանքը փոփոխելը:

Մինևույն ժամանակ, այդ արգելքը չի բացառում դատավճիռը բեկանված և նոր քննության ուղարկված քրեական գործով մեղադրանքի փոփոխությունն առհասարակ: Սահմանված արգելքը վերաբերում է միայն հատկապես մեղադրանքը

<sup>21</sup> Տե՛ս European Court of Human Rights, Case of Sadak and others v. Turkey, <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-60498>

փոփոխելու համար դատական ակտը բեկանելուն, գործը նոր քննության ուղարկելուն և դրա ընթացքում մեղադրանքը փոփոխելուն: Իսկ որևէ դատական սխալի հիմքով դատական ակտը բեկանելուց հետո քրեական գործի նոր քննության ընթացքում մեղադրանքի պաշտպանության գործառույթն իրականացվում է առանց սահմանափակումների՝ դրանից բխող բոլոր դատավարական լիազորությունների իրականացման, այդ թվում՝ մեղադրանքի փոփոխման հնարավորությամբ<sup>22</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ Օրենսգիրքը հիմնարար փոփոխությունների է ենթարկել մեղադրանքի փոփոխման ինստիտուտը: Նոր օրենսդրության պայմաններում մեղադրանքի կողմը գրկվել է մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված սխալները մեղադրանքի փոփոխման միջոցով ուղղելու հնարավորությունից: Նման կարգավորումն էականորեն բարձրացնում է դատախազի դերը նախնական քննության նկատմամբ հսկողություն իրականացնելիս, ինչպես նաև մեղադրանքը ձևակերպելիս: Այլ կերպ՝ նոր օրենսդրությունը առաջադիմական մոտեցում է որդեգրել քննարկվող իրավահարաբերություններում՝ խուսափելով հիմնախնդրային հարցերի հնարավոր առաջացումներից, մասնավորապես՝ դեռևս խորհրդային քրեական դատավարության տարր հանդիսացող լրացուցիչ նախաքննության ինստիտուտից հրաժարվելը:

### **Եզրակացություն**

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքների հիման վրա հանգում ենք հետևյալ եզրահանգումներին.

- «Փաստական և իրավական հիմնավորում» եզրույթների օգտագործումը մեղադրանքի օրենսդրական ձևակերպման մեջ առավել քան լիարժեք և ողջամիտ մեկնաբանում է մեղադրանքի ինստիտուտի իրավական էությունը, քանի որ վերջինները, հանդիսանալով միևնույն իրավական հասկացության տարր, պետք է համաձայնեցված լինեն, և եթե մեղադրանք հասկացությունը սխալ իրավական ձևակերպում ստանա, կառաջանա անհամապատասխանություն արարքի իրավական որակման միջև:
- Օրենսգիրքը փոփոխությունների է ենթարկել մեղադրանքի փոփոխման ինստիտուտը: Նոր օրենսդրության պայմաններում մեղադրանքի կողմը գրկվել է մինչդատական վարույթի ընթացքում թույլ տրված սխալները մեղադրանքի փոփոխման միջոցով ուղղելու հնարավորությունից:
- Ներկա օրենսդրությունն ամրագրել է մեղադրանքի փոփոխման մեկ ռեժիմ, ինչը թույլ է տալիս մեղադրանքը փոփոխել միայն առանց նոր քննչական գործողություններ կատարելու համար դատական քննությունը հետաձգելու հնարավորության, և այն դեպքում, երբ ի հայտ են եկել նախ-

<sup>22</sup> Տե՛ս Գեղամ Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱՐԳ/0121/01/11 որոշումը <https://www.arlis.am/documentview.aspx?docID=76839>

կինում օբյեկտիվորեն անհայտ հանգամանքներ:

- Օրենսդիրը մեղադրյալի համար ոչ միայն կանխատեսելի է դարձրել վարության քննարկվող զարգացումը, այլև նախատեսել է ընթացակարգային հնարավորություն, որպեսզի վերջինը մեղադրանքի փաստական հանգամանքների և իրավական գնահատականի հնարավոր փոփոխության վերաբերյալ պատշաճ տեղեկացվի և ներկայացնի իր դիրքորոշումը, ինչն էլ իր հերթին ողջամիտ և արդարացի է դարձնում նշված ինստիտուտի իրավական կարգավորման փոփոխությունները:



**Գրականության ցանկ (reference list, список литературы)**

1. ՀՀ Սահմանադրություն  
RA Constitution
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին)  
RA Criminal Procedure Code
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 01-ին)  
RA Criminal Procedure Code
4. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք  
RA Law “On Prosecutor’s Office”,
5. Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա  
European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms,
6. Դամբարյան Ա., Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը, Երևան, «Իրավունք» հրատ., 2009  
Ghambaryan A., “Change the accusation and renouncement of the accusation at the court”, Yerevan, Edition “Law”, 2009
7. Մկրտումյան Ա., Ավետիսյան Դ., Ենգիբարյան Վ., Մելիքյան Ռ., Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2011  
Mkrtumyan A., Avetisyan D., Yengibaryan V., Meliqyan R., “Scientific and practical interpretations of the decisions of the Court of Cassation of the Republic of Armenia”, Yerevan, Edition “Asoghik”, 2011
8. Սարգսյան Հ., Դատախազի կողմից մեղադրանքի փոփոխման հիմնահարցերը ըստ ՀՀ դատավարության նոր օրենսգրքի նախագծի, Պետություն և իրավունք, N2 (64), 2014, ԵՊՀ  
Sargsyan H., “The basic issues of changing the accusation from the prosecutor’s side according to the draft RA procedural code”, State and law, N2 (64), 2014, YSU,
9. Բաղդասարյան Գ., Դատարանում մեղադրանքի փոփոխման սահմաններն ու դրա նկատմամբ դատական վերահսկողությունը, Պետություն և իրավունք, N 1 (67), Երևան, 2015  
Baghdasaryan G., “Limits for changing accusation in the court and judicial control over them”, State and law, N 1 (67), Yerevan, 2015
10. Միելյան Ռ., Մեղադրանքի հասկացությունը և գործառության ընթացակարգերը ՀՀ քրեական դատավարությունում, «Արդարադատություն» գիտական

հանդես, 2020, 2 (51)

Mheryan R., “The concept of accusation and its functional characteristics in criminal procedure of the Republic of Armenia”, scientific journal “Justice”, 2020, 2 (51)

11. Ղուկասյան Հ., Մելքոնյան Դ., Նիկողոսյան Ա., ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնարանման գործնական ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022  
Ghukasyan H., Melqonyan D., Nikoghosyan A., “The practical guide to the interpretation of conceptual decisions, innovative ideas and basic institutions of the Criminal Procedure Code of the Republic of Armenia”, Council of Europe, 2022
12. Фаткуллин Ф. Н. Обвинение и судебный приговор, Казань, 1965,  
Fatkulin F.N., “The accusation and the court verdict”, Kazan, 1965,
13. Савицкого В.М., Уголовный процесс России. Лекции-очерки/ А.М. Ларин, Э.Б. Мельникова, В.М. Савицкий / Рос. акад. наук, Ин-т государства и права, Акад. правовой ун-т, Издательство: БЕК, Москва, 1997,  
Savickovo V.M., “Criminal process of Russian”, Lectures-essays /A.M. Larin, E.B.Melnikova, V.M. Savicki/ Institute of State and Law, Academical Law University, Edition BEK., Moscow, 1997,
14. Фаткуллин Ф.Н., Проблемы теории государства и права/ Учебное пособие, Казань, КЮИ МВД России, 2003.  
Fatkulin F.N., “Problems of the theory of state and law”, Tutorial, Kazan, KUI MVD Russian, 2003,
15. Федотченко А.В., “Привлечение лица в качестве обвиняемого”, Автореф., дисс. ... канд. юрид. наук, 2006,  
Fedotchenko A.V., “Involving a person as an accused”, Avtoreferat, dissertation, PHD, 2006,
16. Андреянов В.А., “Обвинение в российском уголовном процессе: понятие, сущность, значение и теоретические проблемы реализации”, диссертация ... канд. юрид. наук., Екатеринбург, 2009,  
Andreyanov V.A., “The accusation in Russian criminal procedure: concept, essence, meaning and theoretical problems of implementation”, dissertation, PHD, Yekaterinburg, 2009,
17. Ермолаев Д.О., Ермолаева Ю.Н., Мулаева Х.М., “Некоторые проблемы института изменения обвинения и отказа от него в уголовном процессе России”, Журнал Вестник алтайской академии экономики и права, 2018, № 7,  
Yermolaev D.O., Yermolaeva U.N., Muleva X.M., “Some problems of the institution of changing accusation and renouncement them in criminal procedure in Russia” Journal “Vestnik’ of the Altai Academy of Economics and Law, 2018, № 7,
18. Սահմանադրական դատարանի 2007 թվականի հունիսի 24-ի թիվ ՍԴՈ-710

- որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/633c18d94f1f2\\_sdv-710.pdf](https://www.concourt.am/decision/decisions/633c18d94f1f2_sdv-710.pdf),  
The decision SDO-710 of the RA Court of Constitutional, dated july 24, 2007,  
[https://www.concourt.am/decision/decisions/633c18d94f1f2\\_sdv-710.pdf](https://www.concourt.am/decision/decisions/633c18d94f1f2_sdv-710.pdf),
19. Արկադի Պասայանի գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԳ/0115/01/09 որոշում,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=66382>,  
The decision № TD/0115/01/09 of the RA Court of Cassation in the case of Arkady Papyan, dated november 5, 2010,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=66382>,
20. Լևիկ Պողոսյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0136/11/11 որոշում,  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77189>,  
The decision № EKD/0136/11/11 of the RA Court of Cassation in the case of Levik Poghosyan, dated december 22, 2011,  
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77189>,
21. Գեղամ Ղազարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2012 թվականի մարտի 30-ի թիվ ԱԲԴ/0121/01/11 որոշում,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=76839>,  
The decision № ARD/0121/01/11 of the RA Court of Cassation in the case of Gegham Ghazaryan, dated march 30, 2012,  
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=76839>,
22. European Court of Human Rights, Case of Subinski v. Slovenia,  
<https://hudoc.echr.coe.int/fre?i=001-79156>,
23. European Court of Human Rights, Case of Pelissier and Sassi v. France,  
<https://hudoc.echr.coe.int/fre?i=002-9400>,
24. European Court of Human Rights, Case of Pellisier and Sassi v. France,  
<https://hudoc.echr.coe.int/fre?i=002-9400>,
25. European Court of Human Rights, Case of Sadak and others v. Turkey,  
<https://hudoc.echr.coe.int/fre?i=001-60498>:

**Anahit Avdalyan**

*Prosecutor of the Prosecutor's Office of Arabkir and  
Kanakaner-Zeytun Administrative Districts of Yerevan City*

## ACCUSATION IN THE CRIMINAL PROCEDURE<sup>1</sup>

### **Abstract**

The article is devoted to the study of the criminal legal meaning of the concept of «accusation» and current issues of changing the accusation by the prosecutor.

The accusation predetermines the essence of the protection of the legitimate interests of the state and the citizen, which is considered the driving force of criminal proceedings, that is, the accusation is the institution of the criminal process through which the functioning of the criminal prosecution system is ensured, therefore, by discussing the theoretical basis of the accusatory activity we can start determining its practical basis and propose possible options for its legislative development which are expected.

As for the institution of changing accusation, this is one of the prosecutor's functions. It is obvious that the initial impulse for the emergence and development of all other criminal procedural functions is the accusation. At the same time, it is necessary to take into account the fact that the judicial process is variable and at each stage receives more factual data, and in connection with new factual data, the factual circumstances of the case may change, including the criminal legal category of the acts that became the accused, that is, they are not excluded circumstances of such factual circumstances that were not disclosed and could not be disclosed and which objectively require a change accusation presented to the accused.

**Keywords:** accusation; prosecutorial function; arraign; change the accusation; criminal assessment.

---

<sup>1</sup> The article was presented on 08.05.2024 and was reviewed on 14.05.2024.

**Анаит Авдалян**

*Прокурор прокуратуры административных округов  
Арабкир и Канакер-Зейтун города Ереван*

## **ОБВИНЕНИЕ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ<sup>1</sup>**

### **Абстракт**

Статья посвящена изучению уголовно-правового значения понятия «обвинения» и актуальным вопросам изменения обвинения прокурором.

Обвинение предопределяет сущность защиты законных интересов государства и гражданина, который считается движущей силой уголовного судопроизводства, то есть обвинение является тем институтом уголовного процесса, посредством которого обеспечивается деятельность системы уголовного преследования, следовательно, обсуждая теоретическую основу обвинительной деятельности можно приступить к выявлению его практической составляющей и предложению возможных вариантов его законодательного совершенствования.

Что касается института изменения обвинения, то это один из составляющих прокурорской функции. Очевидно, что первоначальным импульсом возникновения и развития всех остальных уголовно-процессуальных функций является обвинение. При этом необходимо учитывать тот факт, что процесс уголовного процесса изменен, и на каждой стадии получают дополнительные фактические данные, и в связи с этими новыми фактическими данными могут меняться фактические обстоятельства дела, в том числе уголовно-правовая оценка деяния, приписываемого обвиняемому, то есть не исключено возникновение таких фактических обстоятельств, которые не были известны и не могли быть известны, и которые объективно требуют изменения обвинения, предъявленного обвиняемому.

**Ключевые слова:** обвинение; прокурорская функция; предъявить обвинение; изменить обвинение; уголовная оценка.

---

<sup>1</sup> Статья была представлена 08.05.2024 и прошла рецензирование 14.05.2024.